

Թադևոս Ա.Խաչատրյան  
*Բանաս.գիյր. թեկնածու*

## ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԴԱՐԵՐԸ ԵՎ ԻՐ ՄԵԿՆԱԲԱՆԸ

Նվիրվում է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի ծննդյան  
90-ամյակին\*

**Բանալի բառեր** – գրականություն, գրականագիտություն, ժողովրդագրություն, տեքստ, համակարգ, փիլիսոփայություն, մեթոդ, վերլուծություն, հիմնախնդիր:

Երբ ավարտեցի ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի «Հայոց գրականության երկու դարը» հոդվածների ժողովածուի չորրորդ գրքի ընթերցումը, իմ հարյուրավոր նշումների մեջ չգտա մի տող, համառոտ պարբերությամբ շարադրված մի միտք, դույզն–ինչ տանելի նախադասություն, որ այնպես դիպուկ բնութագրեր հեղինակին, ինչպես նրա իսկ հարցազրույցներից մեկի տողերը:

Եվ եթե ապավինում եմ ստորև մեջբերվող հենց այդ տողերին, ականա հայտնվում եմ Պարույր Սևակի վիճակում, երբ շուրջ հիսուն տարի առաջ գրախոսելով նույն հեղինակի «Հայկական ժողովրդագրությունը, խոստովանել է. «... **ինձ համար մեղք էր վերաշարադրել Սարինյանի դիպուկ ձևակերպումները, կուռ բանաձևումները և լայնարձակ մտորումների մղող այն դիտումները, որոնք ընդամենը մի քանի էջի վրա են սեղմված այնպես, ինչպես «սատանան 22ի մեջ** (ընդգծումը մերն է–Թ.Խ.)»<sup>1</sup>:

Իրավիճակի նմանությունը պարտադրում է միևնույն հակազդեցությունը, ուստի չփորձելով խուսափել Պ.Սևակի գրախոսականի՝ «**Հայկական ժողովրդագրությունը և իր մեկնաբանը**» վերնագրային համաբանությունից, միտքը շարունակենք հենց իր՝ Սարինյանի խոսքերով. «Պարզապես իմ էությունը մշտապես երկփեղկված է եղել ներքին հակասականությամբ, մի անհասկանալի խզումով ներքին աշխարհի և արտաքին աշխարհի միջև: Արտաքին աշխարհը երբեք չի գոհացրել. իմ մեջ մշտապես արթուն է պահել ինչ–որ ընդվզում, ինչ–որ անբավականություն գգացում: Եվ դա իմ մեջ ձևավորել է չհասկացված անհատի բարդույթը»<sup>2</sup>: Հաջորդող տողերում գրականության պատմաբանը փորձում է տալ

\*Ընդունվել է տպագրության 1.08.2014:

1 Սևակ Պ., Երկերի ժողովածու, հատ. 5, Եր., 1974, էջ 306:

2 Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք չորրորդ, Եր., 2004, էջ 521:

«չհասկացված անհատի» բնութագիրը. «Ես հաշտ չեմ եղել իրականության հետ, և հակասականությունը իմ մեջ կազմավորել է բնական **հոռետեսություն, անհատապաշտություն** ու այսպես ասած, **«միայնակ գայլի»** կենսակերպը: Այստեղ է իմ անհատականությունը: Հենց այս արժեքներն էլ ամրակայել են իմ դիմադրողականությունը, խթանել ստեղծագործելու իմ ներքին մղումները, լարել իմ կամքը նպատակի իրականացման»<sup>3</sup>:

«Անհատապաշտություն», «հոռետեսություն», «միայնակ գայլի կենսակերպ» ինքնատրակումները չափազանց արտառոց չէն անառարկելիորեն կոլեկտիվապաշտ, անվերապահորեն լավատես, ընդհանուր հոտում մակաղած խորհրդային մարդու իրողության ֆոնին, երբ եթե հնարավոր էր անհատապաշտություն, ապա միայն «Ստալին» անունով, քանզի հոռետեսները վաղուց գուլագներում էին, իսկ միայնակ գայլի կենսակերպով ապրողների կարելի էր հանդիպել Ջեյ Լոնդոնի և Հերման Հեսսերի վեպերում: Սակայն մեջբերվող հատվածի շարունակության մեջ Սարինյանը ավելի քան անողոք է սեփական ինքնագնահատության հարցում. «Եվ ես ստեղծեցի իմը: Ստեղծեցի միայնակ, պայքարով ու դարձա փաստ, համառ և անդիմադրելի, և իմ հաղթանակը կատարյալ էր: Բայց դա տառապանքի ուղի էր, արտաքուստ տրամաբանված, ներքուստ աններդաշնակ և երբ ետադարձ հայացքով նայում եմ անցյալին, ոչ մի կերպ չեմ կարողանում միացնել նրա օղակները **և ինձ թվում է, թե ես չեմ գտել այն, ինչ որոնել եմ և կորցրել եմ ավելին, քան գտել եմ**»<sup>4</sup> (ընդգծումը մերն է-Բ.Խ.):

Սա արդեն գրականագետի գործունեության գնահատական չէ, այլ ռոմանտիզմի գեղագիտության բոլոր չափանիշներով կերտված գրական կերպարի բնութագիր (ով գիտե, գուցե դասական ռոմանտիզմից մինչև նեոռոմանտիզմի խնդիրներով տևական զբաղումը ուսումնասիրողին պարտադրել է ուսումնասիրվող «օբյեկտի» հատկանիշները, և նրա անձնական գնահատություններում հայտնվել են այն նույն որակները, որոնք հատուկ են ռոմանտիզմի հերոսներին):

Սակայն մեջբերված հատվածներում բարձրացված հարցը նման բնութագրումների ճշմարտացիության մեջ չէ: Դա ինքնախոստովանության այն կերպն է, որով ուրվագծվում է գրականագետի մի կերպար, որ հազվագյուտ երևույթ է մեր ողջ գրականագիտության պատմության մեջ: Քանզի ընդունված է կարծել, թե գրականագետը սոսկ անդեմ պատմագիրն է մի արարչության, որ գրականություն է կոչվում, և ապարդյուն ոգեհարց-միջնորդը հանրության առջև<sup>5</sup>: Այսինքն՝ մասնագիտության ակնհայտ թերագնահատության մի ընթացք, որ ժամանակակից հայ գրական համակարգը հանգեցրել է մի իրողության, որտեղ ոչ միայն գրականագիտությունն է դադարել արժեք լինելուց, այլև՝ գրականությունը:

Սարինյան գրականագետի ողջ գործունեությունը մշտապես ուղղված է եղել հենց **գրականագիտության՝ որպես մասնագիտության կարգավիճակի բարձրացմանը**: Իսկապես՝ ռոմանտիկական, ապարդյուն մի ջանք, ընդհանուր հոսանքին հակառակ գործողություն, իր արտահայտությամբ՝ «տառապանքի ուղի», քանզի իրերի «բնական» զարգացումը միանգամայն այլ տրամաբանություն է ենթադրում, քան կարող է Սարինյանի «բնական հոռետեսությունը» կանխատեսել: Սա նույնպես կարելի է վերագրել գրականագետի ռոմանտիզմին, որովհետև բարձրացնել գրականագիտության կարգավիճակը մի ժամանակաշրջանում, երբ ավելի ու ավելի է թուլանում ուսումնասիրվող օբյեկտի՝ գրականության՝ որպես մարդկային գեղագիտական գործունեության դաշտի ազդեցությունը, նույնն է, թե գրականագիտությունը հայտարարել բացարձակապես ինքնաբավ գիտաճյուղ՝ առանց հաշվի առնելու հետազոտվող առարկայի ներկայությունը կամ ներկայությամբ հանդերձ՝ զրոյականի ձգտող գործունեության ոլորտը: Անշուշտ, տեսա-

3 Նույն տեղում, էջ 521-522:

4 Նույն տեղում:

5 Տե՛ս **Բարտ Բ.** Избранные работы. Семиотика. Поэтика. М. «Прогресс», 1989, էջ 361.

կանորեն դա հնարավոր է, ինչպես, ասենք՝ գրեթե բոլոր բնական գիտություններում (տեսական և կիրառական ֆիզիկա, տեսական և կիրառական մաթեմատիկա և այլն): Առերևույթ պարագան նույնն է թվում նաև գրականության մեջ՝ գրականության տեսություն և քննադատություն զուգահեռներով, սակայն զարգացման դիալեկտիկական օրենքի միանգամայն տարբեր հետևողականությամբ:

Գրականության տեսությունը հետևությունների և եզրահանգումների հանրագումար է, ինչը չի կարելի պնդել, ասենք՝ նույն տեսական ֆիզիկայի մասին, որը մշտապես թելադրողական նշանակություն ունի: Մինչդեռ գրականության պատմության մեջ միայն մեկ անգամ է համանման վիճակ ստեղծվել, երբ տեսությունը կանխորոշել է գրականության զարգացման ընթացքը՝ Բուալոյի «Քերթողական արվեստը» չափածո տրակտատի հայտնությունը: Այնպես որ, գրականագիտության կարգավիճակը բարձրացնելու սարինյանական ձգտումը, եթե անգամ տեսականորեն նվազագույն կարելիություն ունի, բնավ անհնարին չէ, եթե այն չի վերածվում գրականությունը զավեշտական մատչելիության տանելու գաղափարախոսական գործիքի և ծառայում է գրականությանը, ոչ թե առանձին գրողների համբավի հաստատմանը: Իսկ Սարինյանը մեկ անգամ չէ, որ մոտ է եղել գրականություն սահմանելու ու կանխատեսելու ճշմարիտ մեթոդին և գրականությունը համարժեք ընթերցելու գրականագիտական արվեստին:

Օրինակները բազմաթիվ են, բերենք միայն մեկը. «Մի առիթով մենք ասել ենք, որ Էմինն ու Կապուտիկյանը ժամանակակից գրական շարժման վրա չեն ազդում ... Էմինը հակում չունի կռահելու երևույթի փիլիսոփայությունը, նա բանաստեղծականը գտնում է այնտեղ, ուր իմացաբանական սկիզբ է ծառայում էֆեկտը ... Իրողությունն իբրև նախադրյալ, տրամաբանական մտահանգումն իբրև լուծում, այսպիսին է Էմինի ներքին տարածությունը ... Թվում է, թե Կապուտիկյանի բանաստեղծական տողը տնօրինում է որոշ ազատություն, և դրանում ճշմարտություն կա: Բայց Կապուտիկյանի բանաստեղծության ոգին, ռիթմն ու էներգիան նախապես հանձնված են էստրադային-արտասանական շեշտի տնօրինությանը, ուր հրապարակախոսական էնտոլոգիազմը տրամադրությունների միակ շարժիչ է ներկայանում: Ոչ մի չասված բան չկա տողերի արանքում. բառն ու տողը թվաբանական ճշգրտությամբ այնպես գամված են իրենց էությունը, որ այլևս չեն հանդուրժում ներքին անհայտների փիլիսոփայական ենթամաստ: Ահա թե ինչու նրա գեղագիտական ու իմացաբանական հնարավորությունները ժամանակի ու տարածության լայն շառավիղ չեն գծում... Վերջին տարիների պոեզիայի բնագավառում կատարվող էական տեղաշարժերից մեկն այն է, որ պատմական ստուգության ենթարկեց բանաստեղծական մի սերնդի ստեղծագործական ճանապարհի փորձը... Այդ դիֆերենցիացիայի արդյունքն առայժմ այն է, որ պոեզիայի զարգացման ուղեգծերը հանձնվեցին Համո Սահյանին և Պարույր Սևակին»<sup>6</sup>.- տասնամյակներ առաջ գրել է Սարինյանը՝ պատասխանելով «Գրական թերթի» հարցաթերթիկին (1968):

Առայժմ նույնությամբ ձգվող դպրոցական գրականագիտության դիֆերամբների ֆոնին դժվար է առանձնացնել ուրիշ մի քննադատի, որ այդպիսի ճշգրտությամբ կարողանար ընթերցել և կանխատեսել ավելի քան կես դար ստեղծվող գրականության զարգացման ընթացքը և հայտնաբերել օրինաչափությունների մի պարագիծ, որում հեշտորեն կարելի է տեղավորել անգամ ամենատարբեր գեղագիտական ըմբռումներ ունեցող գրողների: Կանխատեսելու այս ունակությունը Սարինյան գրականագետի ամենաուժեղ կողմն է: Քննադատի այս որակով օժտված էր նաև **Սուրեն Աղաբաբյանը**, սակայն գրական երևույթի **հեռանկարը դեռ խանձարուծում կռահելու ու գնահատելու բացառիկ հատկությամբ նույնիսկ գերազանցելով Սարինյանին, տեսական ընդհանրացումների մակարդակում զգալիորեն գիջում էր վերջինիս:** Այս հարթության մեջ քննելիս, անշուշտ, գայթակղիչ կլինի Սարինյանին համեմատել նաև նույն ժամանակներում գործած

6 Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը..., էջեր 513, 515:

մեր մյուս քննադատների, բնականաբար, առաջին հերթին Էդվարդ Զրբաշյանի և Հրանտ Թամրազյանի հետ:

Քննադատների այս խումբը շատ կողմերով կանխորոշել և այժմ էլ շարունակում է ձևավորել ժամանակակից հայ գրականագիտության ընդհանուր տիպաբանությունը (Սարիսյանի կարծիքով՝ կուլտուր-պատմական մեթոդաբանությամբ<sup>7</sup>): Իսկ սերնդափոխությունը, չնայած առանձին հաջողություններին, այդպես էլ տեսանելի չէ՝ գոնե դպրոց և հետևորդներ ունենալու իմաստով: Ինչ խոսք, թվարկված հեղինակներն ունեն իրենց նախահայրերը (Սարիսյանի կարծիքով՝ Մ.Աբեղյան և Արսեն Տերտերյան<sup>8</sup>), բայց միննույն է՝ գրականագետների այս խմբի գործառնական տիրույթները շատ ավելի ընդարձակ են, քան իրենց մեծ նախորդներինը: (Միայն այն հանգամանքը, որ տասնամյակներ շարունակ նրանց է վստահված եղել դպրոցական ու բուհական դասագրքերի ճշտող մեծամասնությունը, ինքնին խոսուն փաստ է:)

Ինչևէ, չնայած նախընտրած միևնույն մեթոդաբանությանը, Էդ.Զրբաշյանի, Հր. Թամրազյանի և Ս. Սարիսյանի անհատական տարբերություններն ակնհայտ են անգամ ոճի նվազագույն՝ նախադասության ձևակերպման մակարդակում: Այսպես, **Զրբաշյանի նախադասությունը զուսպ է ու պարզ, առանց արհեստական խճողումների, երկիմաստություններից բացարձականապես զուրկ: Նա միտքը բանաձևում է այնպես, ինչպես նախապես ցանկանում է՝ չառաջադրելով այնպիսի դրույթներ, որոնց հաստատումը անհնարին կլինի: Ուստի նա ապացուցում է այն, ինչ ցանկանում է ցույց տալ և ցույց է տալիս այն, ինչ դժվար չէ ապացուցել, քանզի այն ամենաակնհայտն է:** Իսկ ակնհայտը տեսնելը, Կոնան Դոյլի հոչակավոր հերոսի օրինակով և դեղեկտիվի օրենքներով, ամենադժվարն է: Այդպիսին է Զրբաշյանը և՛ հայ տաղաչափությունն ուսումնասիրելիս, և՛ գրականագիտական մյուս աշխատություններում. չանել անհնարինը, այլ առանձնացնել և հաստատել էականը: Պատկերավոր ասած՝ նրա միտքը թռիչքներ չունի, այս դեպքում դրականորեն ընդգծված մի հատկանիշ, որ նրան անաչառ գրականագետի համբավ է պարգևում և ներդաշնակ, հավասարակշիռ գիտնականի հեղինակություն:

**Հրանտ Թամրազյանի նախադասությունը ավելի դինամիկ է, չափածո արձակին հատուկ ռիթմով: Նրա համար միտքն ու տրամաբանությունը ածանցյալ են և ստորոգելի գեղեցիկ, հաճախ գեղարվեստական ձևակերպմանը: Թամրազյանի երևակայությունը չափազանց վառ է և անհագուրդ: Նրա համար գրականությունը միակ աստվածությունն է, իսկ քննադատը՝ մարգարե, որ փորձում է անքննելին քննելի դարձնել:** Իսկ դրան հնարավոր է հասնել նույն հնարներով, ինչով առաջնորդվում է գեղարվեստը՝ բառաշերտի միևնույն համաբանությամբ և խոսքարվեստի միևնույն շեշտադրությամբ: Այլ կերպ ասած՝ քննադատությունը պետք է ստեղծվի իր արարչի՝ գրականության պատկերով և նմանությամբ: Առանձին բացառություններով հանդերձ, **Թամրազյանի աշխատություններն ու հոդվածները գեղեցիկ էսսեններ են, քան գիտականորեն հիմնավորված ավարտուն կառույցներ:** Թամրազյանին և նրա գրականագիտական դպրոցին տրված գնահատություններում Սարիսյանը գործածում է «գիտական ռեալիզմ» հասկացությունը<sup>9</sup>, որը, ճիշտ է, որոշ առումներով բացահայտում է քննադատի մեթոդաբանությունը, սակայն ավելի ստույգ քննելու դեպքում շատ ավելի հարմար կլիներ բացառել և՛ «գիտական»-ը, և՛ «ռեալիզմ»-ը, քանի որ «ռեալիզմը» Թամրազյանի համար ավելի շուտ սևեռուն մեկնակետ է, քան մեթոդ, իսկ «գիտականությունը» հաճախ ածանցյալ է<sup>10</sup>: Այսպես, Թամրազ-

7 Տե՛ս նույն տեղում, էջ 398:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 196-224:

9 Տե՛ս նույն տեղում, էջ 206:

10 Տե՛ս **Թադևոս Ա. Խաչատրյան**, Հովհաննես Թումանյանի գրական մեթոդը, «ՎԷՆ», 2013, N 2 (42):

յանը երբեմն փորձում է ապացուցել անապացուցելին: Ասենք՝ Տերյանը «հոգեբանական ռեալիստ է»<sup>11</sup>, կամ Մուրացանը՝ «զգաստ ռեալիստ»: Այս գնահատություններում ավելի շուտ կանխորոշված վերաբերմունք կա, քան գիտականորեն հիմնավորված վերլուծություն: Նա ինքնակենտրոն է, և այն ամենը, ինչ պնդում և հաստատում է, հասկանալի է միայն իր իսկ համակարգում, իսկ դրանից դուրս՝ հաճախ անընդունելի:

Սարինյանի նախադասությունը Էդ. Ջրբաշյանի և Հր. Թամրազյանի համեմատությամբ հաճախ ջղաձիգ է: Այն մատնում է հեղինակի դեպրեսիվ հակումը և փորձը՝ մտքով հաղթահարել այն, ինչ ամենից դժվարն է ապացուցել: Սարինյանը գիտական կանխադրույթի, իր իսկ առաջադրած կանխադրույթի պատանդն է: Այդ պատճառով նրա նախադասությունների արանքում մերթընդմերթ նկատելի են դատարկ տարածություններ, մի տեսակ վակուում, ինչը նա փորձում է լցնել ձիշտ, սակայն հաճախ երկիմաստ, իմացությունից եկող դատողություններով: Վերոհիշյալ գրախոսականում դիպուկ է նկատել Պ.Սևակը. «լայնաթիկունք «անտառագետ» Սարինյանի հանդեպ փոքր-ինչ խեղճանում է Սարինյան-«ծառագետը»<sup>12</sup>:

Սարինյանը գրականության պատմության անմրցելի տեսաբան է, մեթոդի և մեթոդաբանության անդադար ջատագով: Տերյանի նման նա կարող է կրկնել՝ ուր չկա մեթոդ, չկա և գիտություն: Սարինյանի՝ Աբեղյանին տրված գնահատականը՝ «Աբեղյանը գիտնականի բացառիկ ունակությամբ համատեղում է պատմությունը, բանասիրությունը ու տեսական-փիլիսոփայական մեկնությունը»<sup>13</sup>, գրեթե առանց վերապահման կարելի է վերագրել իրեն:

**Շարունակելով երեք քննադատների՝ Էդ. Ջրբաշյանի, Հր.Թամրազյանի և Ս.Սարինյանի համեմատական քննաբանությունը, կարելի է ասել, որ առաջինի գրականագիտության մեջ գերիշխող է բանասերը, երկրորդի մոտ՝ քննադատը, երրորդի պարագայում՝ գրականագետը: Նշված առանձնահատկությունները նրանցից յուրաքանչյուրի մեջ ոչ միայն գերիշխող են, այլև առավելություններ մյուսների հանդեպ:**

**Իհարկե, սա չի նշանակում, թե, ասենք, Ջրբաշյանը թույլ քննադատ է, Թամրազյանը՝ թույլ գրականագետ, կամ Սարինյանը՝ թույլ բանասեր: Սա նշանակում է, որ Ջրբաշյանը գրականությունն ընթերցում է որպես փաստ, Թամրազյանը՝ որպես տեքստ, Սարինյանը որպես մեկնիչ: Այդ պատճառով նրանց մեջ Սարինյանը «սխալվում է» ամենից հաճախ, քիչ պակաս՝ Թամրազյանը, ավելի նվազ՝ Ջրբաշյանը:**

Նույն պատճառաբանությամբ Սարինյանի ներագդեցությունը գրական ընդհանուր ընթացքի վրա շատ ավելի զգալի է, քան մյուս երկուսի: Որովհետև, որքան էլ պարադոքսալ հնչի, «ձիշտ սխալի» կամ «սխալ ձիշտի» հակազդեցությունն ավելի ուժգին ռեզոնանս ունի և ավելի մեծ բանավեճերի առիթ է տալիս, քան ակնհայտ «ձձարտությունների»<sup>14</sup>: Դա գալիս է նաև նրանից, որ Ջրբաշյանի և Թամրազյանի տեքստերի համեմատությամբ, **Սարինյանի գրությունը շատ ավելի «բաց համակարգ» է և պարբերաբար նորոգության հիմք է տալիս:**

Գրականագիտական գործունեության ընթացքում Ս.Սարինյանը բազմաթիվ գաղափարներ է հղացել, որոնցից շատերը լավագույնս կիրառել է իր աշխատություններում: Դրանց մի մասը մնացել է տողատակերում, առանձին հոդվածների մեջ և զարգացում չի ունեցել: Վերջին 10-15 տարիներին Սարինյանի մտահղացումների շարքում առանձնանում է մեկը, որի մասին արժե ավելի մանրամասն խոսել: Խոսքը գրականության փիլիսոփայության մասին է, որը մի ամբողջ բաժին է գրադեցնում «Հայոց գրականության երկու դարը» աշխատության չորրորդ

11 Տե՛ս Թամրազյան Հրանտ, Վահան Տերյան, Եր., «Սովետ. գրող», 1985:

12 Սևակ Պ., Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 312:

13 Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, էջ 198:

գրքում (հատորում ընդգրկված նյութերի կեսից ավելին):

«Հարցի պատմաբանական հղումն ուղղակի է՝ ինչո՞ւ կա Արվեստի փիլիսոփայություն, Կրոնի փիլիսոփայություն, Իրավունքի փիլիսոփայություն, Պատմության փիլիսոփայություն, Բայց չկա Գրականության փիլիսոփայություն», - հենց այս տողերով է բացվում գիրքը:

Հարցի դրվածքը առաջին հայացքից բավական տրամաբանական է թվում: Բայց մի այլ՝ «Արդի գրականագիտության գլխավոր ուղղությունները» հոդվածում, ակադեմիկոսը հարցը փակված է համարում՝ գրեթե անառարկելի պնդումով. «Գրականությունը փիլիսոփայական գիտություն է և այստեղ է նրա գիտակա՝ նացման ուղին և այս մակարդակում է տեսանելի գրականության տեղը հումանիտար գիտությունների համակարգում»<sup>14</sup>:

Հարցաշարը՝ թե ինչու կա պատմության, կրոնի, արվեստի, իրավունքի և չկա գրականության փիլիսոփայություն, անշուշտ, կարելի է շարունակել, սակայն այստեղ խնդիրն այն է, թե ինչու է գրականագետը նախապատվություն տալիս փիլիսոփայությանը: Չէ՞ որ կարելի է նաև գրականության ապագան տեսնել, ասենք, «գրականության հոգեբանության», «գրականության մեխանիկայի», «գրականության երկրաբանության», «գրականության կենսաբանության» և այլևայլ հարթություններում. ինչո՞ւ է փիլիսոփայությունը այդքան արգաստվոր համարվում: Իհարկե, նախընտրության հարց է, մասնավոր գրականության պատմաբանն ինքն էլ գիտակցում է, որ «բացառվում է որևէ մեթոդի չափանիշներով գնահատել մեկ այլ մեթոդի գիտական փորձը, և նույնարժեք են թե՛ սոցիոլոգիական, թե՛ ֆորմալիստական կամ կառուցվածքային և թե՛ հոգեբանական կամ հոգեվերլուծական եղանակների արգաստվորությունը: Էականը տվյալ մեթոդի գիտականացումն է, տեսական ու պատմական հիմունքների համադրումը»<sup>15</sup>: Իսկապես՝ «էականը տվյալ մեթոդի գիտականացումն է», բայց այդ պարագայում որքանով է փիլիսոփայությունն օգնում մեթոդի, այս դեպքում՝ գրականագիտական մեթոդի գիտականացմանը: Ահա հարցը, որին հատորում ընդգրկված և այս հատորից դուրս բազմաթիվ հոդվածներով փորձում է պատասխանել Սարինյանը:

Նախապես ասենք, որ հասկանալի է փիլիսոփայությանը գերապատվություն տալու Սարինյանի ձգտումը. հանել հայ գրականագիտությունը սեփական դափնիներով փառավորված հարյուրամյա թմբիրից, գոնե փոքր-ինչ ընդարձակել հորիզոնը, մեծացնել տեսադաշտը, գրականության հիմնախնդիրների լուծումը ընդլայնել և գնահատության ու վերաբերմունքի ոլորտից տեղափոխել վերլուծության ոլորտ: Այս իմաստով փիլիսոփայությունն իրոք անփոխարինելի է: Մյուս կողմից՝ փիլիսոփայությունն անունն ինքնին գայթակղիչ է մի գրականագիտության համար, որը իրականում եթե անգամ չի կորցրել իր մեթոդաբանական կողմնորոշումները, ապա շատ առումներով արդեն ոչինչ չունի իր զինանոցում: Էլ չենք խոսում այն մասին, որ ինքնագիտակցման մակարդակում և հասարակայնորեն արժեզրկվել է այն աստիճան, որ գիտականության ոչ մի ռեսուրս չի թողել: Ավելին, մեթոդը, որ տիպաբանական է համարում Սարինյանը ողջ հայ գրականագիտության պատմության ընթացքում, գրելով, թե՛ «բոլոր մեթոդներից ամենաարգաստվորն ու համապարփակը կուլտուր-պատմական մեթոդն է, որը հնարավորություն է տալիս գրական երկի համակողմանի վերլուծությանը»<sup>16</sup>, գոնե կոնկրետ արդյունքներով, եթե անգամ ինչ-որ ժամանակ արգաստվոր է եղել (Մ.Աբեղյան, Ա.Տերտերյան), բնավ էլ ոչ համապարփակ, ոչ էլ համակողմանի վերլուծության հնարավորություն չի տվել: **Նախ**, որովհետև լուսնի տակ այդպիսի համապարփակ մեթոդ չկա գիտության և ոչ մի բնագավառում, երկրորդ՝ սույն մեթոդի՝ «ինչպիսին

14 Նույն տեղում, էջ 224:

15 Նույն տեղում, էջ 209:

16 Նույն տեղում, էջ 398:

պատմությունն է, այդպիսին էլ մշակույթն է»<sup>17</sup> նշանավոր հիմնադրույթը Իպոլիտ Տենի ժամանակներից տասնյակ անգամներ վերագնահատության է ենթարկվել և ամենևին էլ՝ ոչ այդ մեթոդի օգտին: Եվ **Երրորդ**, մեթոդի, այս դեպքում՝ իրոք համապարփակ կրախի ուղղակի վկայություն է ներկայիս հայ գրականագիտության վիճակը: Եվ այդպիսի ձևկատագիր է սպասում ցանկացած մեթոդի, երբ հետազոտության եղանակից վերածվում է դոգմայի:

Սակայն, առաջ ընկնելով, մոռացանք նշել ևս մի կարևոր հանգամանք, որ դարձյալ վերաբերում է հայ գրականագիտության մեթոդաբանությանը: Ինչո՞ւ է այն վերանվանվում կուլտուր-պատմական, եթե անցած հարյուրամյակում առնվազն յոթանասուն տարի հայտնի էր մարքսիստական անունով, երբ յուրաքանչյուր աշխատության ներածականում, էլ չենք խոսում՝ յուրաքանչյուր գիտադրույթի սեղմագրում պարտադիր հիշատակվում էր վերլուծության մարքսիստական մեթոդը: Անշուշտ, սա չեմ հնչեցնում որպես մեղադրանք: Ինչո՞ւ և ո՞ւմ մեղադրես, երբ իրականում մեղք չկա, որովհետև, ինձ համար գոնե պարզ է, որ կեղծիքը ոչ թե այն էր, որ գրականագիտական աշխատությունների պարտադիր պայմանը եղել է մարքսիստական լինելը, և հետազոտողները այլընտրանք չեն ունեցել, այլ ճիշտ հակառակը՝ այդ աշխատությունների ճնշող մեծամասնությունը հեռավոր իսկ առնչություն չի ունեցել մարքսիստական մեթոդաբանության հետ: Ասվածն անհեթեթություն է թվում, բայց փորձենք բացատրել մեր միտքը:

Խորհրդային գրականագիտության հիմքը իսկապես հայտարարված էր մարքսիզմը, որում սովորաբար համագոյակցում են մեթոդն ու գաղափարախոսությունը: Մարքսիստական մեթոդը դիալեկտիկական է և պատմական մատերիալիզմը: Մատերիալիզմի միջուկը կազմում է «կեցությունն է որոշում գիտակցությունը» արքիզմը, այդ թվում՝ այն որոշում էր նաև գրողների և ընթերցողների գիտակցությունը: Ըստ մարքսիզմի՝ մշակույթը իր ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների արդյունք է, իսկ դիալեկտիկական ուսուցանում է, որ մշակույթը, ինչպես նաև աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչ զարգանում է որպես ներքին հակասությունների պայքարի հետևանք: Մինչդեռ գաղափարախոսությունը քարոզում է միանգամայն այլ բան. պատմությունն արդեն ավարտվել է (ոչ այն իմաստով, ինչ Ֆուկյաման անվանում է պատմության ավարտ<sup>18</sup>), և սկսվում է իդեալական, անդասակարգ հասարակության հավիտենական գոյությունը: Ներքին բոլոր հակասությունները վերացել են՝ խաղալով իրենց վերապահված դերը...

Ինչպես տեսնում ենք, հաղթանակած մարքսիզմի գաղափարախոսությունը բնավ չի համընկնում մարտնչող մարքսիզմի մեթոդի հետ: Այսինքն՝ գաղափարախոսական ուտոպիզմը մերժում և հակադրվում է մարքսիստական մեթոդին՝ անտեսելով և՛ մատերիալիզմը, և՛ դիալեկտիկական, և՛ պատմականությունը, միաժամանակ բոլոր դարաշրջաններին պարտադրելով միևնույն արժեքային համակարգի սխեման: Մի խոսքով՝ գաղափարախոսությունը խժռում էր մեթոդը, որը մարքսիզմի մեջ ամենաարժեքավորն է: Այս ճողվածքի և հակասականության նախադրյալի վրա էլ գոյատևում էր խորհրդային գրականագիտության խարխուլ մակույկը՝ ունենալով սոսկ գաղափարախոսություն և ո՛չ մեթոդ: Այդ պատճառով ինչ-որ տեղ արդարացված է «մարքսիստական գրականագիտության» սարինյանական կուլտուր-պատմական վերանվանումը: Նույն դիտակետից էլ հասկանալի է դառնում գրականագետի, իր բառերով՝ «ներքին և արտաքին աշխարհի միջև անհասկանալի խզումը» և հակասականությունը, ինչպես նաև «արտաքուստ տրամաբանված, ներքուստ աններդաշնակ»<sup>19</sup> լինելու անկեղծ խոստովանության դրդապատճառը:

17 Տեն **Нарочницкий А.Л.** Юбилей Французской революции: поиски и проблемы. «Новая и новейшая история», 1989, N 3.

18 Տեն՝ **Фукуяма Ф.** Конец истории и последний человек. «Издательство АСТ», 2004.

19 Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, էջ 521-522:

Եվ Սարինյանը ներկայում գործող այն եզակի գրականագետներից է, ով լիովին գիտակցելով գրականության մասին հայկական մտքի տեղապտույտը, փորձում է ելք առաջարկել՝ ապավինելով ոչ թե գոյություն ունեցող գրականագիտական ավանդույթին, այլ ցանկանալով առարկան դուրս բերել, թվում է, հասարակայնորեն ավելի բարձր կարգավիճակ ունեցող ոլորտ՝ փիլիսոփայություն: Քանզի ակադեմիկոսի մյուս՝ «կորցրել եմ ավելին, քան գտել եմ» խոստովանությունը միայն իր կորուստը չէ (ինքը անհամեմատ շատ է գտել), այլ ողջ հայ գրականագիտության: Այն կազմում է ոչ ավել, ոչ պակաս մեկ դար՝ գրականագիտությունը գիտություն դարձնելու, գոնե՝ հստակ տերմինաբանություն, անհակասական համակարգ ստեղծելու փուլը: Սարինյանի ցանկությունների ցանկությունն է եղել **գրականագիտությունը տեսնել որպես գիտություն**: Սրանով նույնպես նա շահեկանորեն առանձնանում է հայ գրականագետների այն ստվար բանակից, որոնք գրականագիտությունը շարունակում են տեսնել առանց բառի վերջին բաղադրիչի:

Իսկ թե որքանով կարող է փիլիսոփայությունը գիտականացնել գրականագիտությունը, և արդյոք, արդարացված են Սարինյանի ակնկալիքները, դա արդեն խնդրի այլ կողմն է: Փաստ է միայն, որ ինքը՝ փիլիսոփայությունը, նույնքան, եթե ոչ ավելի, քան գրականագիտությունը, կարիք ունի գիտականացման: Եվ դա գիտակցում են փիլիսոփայության որպես մեթոդի՝ հումանիտար, անգամ բնական գիտություններում կիրառությունը փնտրող ամենահետևողական նախասնձախնդիրները<sup>20</sup>:

Խնդրի մյուս կողմն այն է, որ գրականագիտությունն ունի ուսումնասիրության կոնկրետ առարկա՝ գրականությունը, իսկ ո՞րն է փիլիսոփայության առարկան: Հարցը բաց է մնում, քանի որ ամեն ժամանակ ունի իր փիլիսոփայությունը և հետազոտելու իր առարկան և նույնիսկ՝ իր նախընտրած փիլիսոփային: Թվում է, թե լուծում կարող է համարվել այն, երբ գրականությունը քննվի իր ժամանակի փիլիսոփայության գուգահեռի վրա: Ասենք՝ 19-րդ դարի հայ գրականությունը դիտարկվի 19-րդ դարի փիլիսոփայության, գլխավորապես՝ դրապաշտության դիրքերից: Բայց այդ դեպքում էլ վտանգվում է գրականագիտության՝ որպես ինքնավար գիտաձյուղի ինքնուրույնությունը, եթե չասենք, որ դրանով ինչ-որ տեղ ածանցյալ կղաճառ գրականությունը՝ առնվազն գաղափարների սերման իմաստով վերածվելով փիլիսոփայության կամակատարի: Այս դիրքորոշման հետ կարելի էր համաձայնել, եթե հակառակ օրինակները բազմաթիվ չլինեին, երբ գրականությունն է սնել փիլիսոփայությունը, իսկ հետատրուկտուրալիստական և հետմոդեռնիզմի փուլում (սկսած անցյալ դարի 70-ական թվականներից) անգամ գրականագիտությունն է դառնում փիլիսոփայելու հիմք՝ դրանով իսկ վերածվելով միջձյուղային գիտակարգի:

Այս առարկությունները թող տպավորություն չստեղծեն, թե մենք փորձում ենք արժեզրկել Սարինյանի փիլիսոփայական վերլուծումները: Քավ լիցի, դրանք Սարինյան գրականագետի աշխատությունների ամենաարժեքավոր կողմերն են (բավական է հիշել հեղինակի «Մուրացանը», իսկ չորրորդ գրքում՝ Բաֆֆու «Խաչագողի հիշատակարանի» և Շիրվանզադեի «Արսեն Դիմաքայան» վեպերի առիթով արված դիտարկումները)<sup>21</sup>: Պարզապես հարկավոր է մշտապես հիշել, որ գրականությունը բազմաձև կառույց է, իսկ փիլիսոփայությունը՝ այդ կառույցի բազմաթիվ շերտերից մեկը, և մեր կարծիքով՝ բնավ ո՛չ առաջնայինը: Ուստի փիլիսոփայությունը պետք է դիտարկել որպես օժանդակություն և ոչ թե բացարձակ նախապատվություն: Սանավանդ վտանգ կա, որ այն առաջարկվելով որպես գրականագիտությունը գիտականացնող ուղի, հանկարծ դառնա խորհրդային

20 Տե՛ս Ալեքսանյան Ա., Գրիգոր Զոհրապի կենսափիլիսոփայությունը, Եր., «Գիր-Գրոց», 1997: Տե՛ս նաև Ալեքսանյան Ա., Հակոբ Պարոնյանի կենսափնաստասիրությունը, Եր., 2013: 21 Տե՛ս Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, էջ 11-13:



գրականագիտությունից հայտնի «երկի հիմնական գաղափարը» կանխադրույթի գաղափարախոսական ինտերցիայի հետևանքը:

Դառնալով Սարինյան քննադատի մեթոդի պարագային, անկեղծ ասած, մեզ համար (և կարծում ենք նաև՝ գրականության համար) ամենևին էլ կարևոր չէ, թե ինչ միջոցներով և եղանակներով է հեղինակը ընթերցում գեղարվեստական երկը, և ձիշտ են, արդյոք դրանք, թե ոչ: Էականն այն է, թե մտքի ինչպիսի՞ որակ են ապահովում նրա վերլուծականները, և այդ ընթերցումը ի՞նչ մտքեր է ծնում: Ի վերջո, գրականությունը և գրականության պատմությունը, որի լավագույն մասնագետն է Սարինյանը, այլ բան չեն, քան ընթերցման պատմություն:

**Թադևոս Ա. Խաչատրյան** – հետաքրքրությունների հիմնական առարկան հայ բանաստեղծության ու արձակի ուսումնասիրությունն է («Բանաստեղծության կեցության և գոյության սահմանագծին», «Գրականագիտությունը, գրականությունը, ժամանակը», «Առասպել, բանաստեղծություն, առասպել», «Ծանր լույսը կամ թե ինչպես է ծանրանում լույսը», «Առասպելների վախճանը», «Հայկական միֆոլոգիա», «Երկանդամության համակարգը 20-րդ դարի հայ գրականության մեջ» և այլն): Տպագրել է հարյուրավոր գրականագիտական և հրապարակախոսական հոդվածներ, էսսեներ («Ինչպես տեսա Լևոն Ներսիսյանին», «Էդմոն Ավետյան. վերադարձի վերջին օղակը», «Լեզու և քաղաքականություն»), գրախոսություններ, թարգմանություններ (Հովհան Ոսկերեբան, «Ճաների ընտրանի», Ավագերեց Հովհան Մեյենդորֆ, «Սուրբ հայրերի աստվածաբանության ներածություն», Գրիգորի Վերմիշև, «Ամիրսպասալար» և այլն) պատրաստել, ծանոթագրել, խմբագրել, առաջաբաններ գրել երկու տասնյակից ավելի գրքերի համար:

## Summary

### TWO CENTURIES OF ARMENIAN LITERATURE AND ITS INTERPRETER

Dedicated to the 90th anniversary of academician  
Sergey Sarinyan

Thadevos A.Khachatryan

The entire work of Sarinyan as literary critic has focused on the rise in social status of study of literature as a profession. Sarinyan was very close to define the literature and predict the true method of reading the literature in equivalent way.

Of course, it would be tempting to compare Sarinyan with other critics of the same period, first and foremost with Ed. Jrbashyan and Hrant Tamrazyan. As a result of this comparative research we can say that in the first case it is the philologist, who is dominant in the literature, in the second case it is the critic and in the last case it is the literary critic. The above features are not only

dominant In each of them, but are also advantages for others.

During his literary activity S.Sarinyan had multiple ideas, many of which were applied to his works. Some of them remained in between the lines, in some articles and were not developed. One of the most prominent ideas of Sarinyan in the last 10-15 years is about the philosophy of literature.

Sarinyan is one of currently operating unique literary critics, who is fully aware of mind spin Armenian science concerning literature, so he is trying to offer a way out, not relying on existing literary tradition, but eager to bring the subject out, seems to a higher social status – in the field of philosophy. Sarinyan’s biggest wish is to see modern literature as a science.

## Резюме

### **ДВА ВЕКА АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ И ЕЕ ТОЛКОВАТЕЛЬ** Посвящается к 90-летию академика Сергея Сариняна

Тадевос А.Хачатрян

Вся работа Сариняна в качестве литературного критика сосредоточена на повышении статуса литературоведения как профессии.

Конечно, было бы заманчиво сравнить Сариняна с другими критиками того же периода, в первую очередь, с Эд. Джрбашяном и Грантом Тамразяном. В результате этого сравнительного исследования можно сказать, что в первом случае доминирующим в литературе является филолог, во втором случае это критик и в последнем – литературовед. Указанные особенности не только доминируют в каждом из них, но также являются преимуществом по сравнению с другими.

Несомненно это не значит, что Джрбашян является слабым критиком, Тамразян – слабым литературоведом или Саринян – слабым филологом. Это означает, что Джрбашян читает литературу как факт, Тамразян – как текст, Саринян – как толкователь. Поэтому среди них Саринян “ошибается” чаще всех, менее – Тамразян, и еще меньше – Джрбашян. Следуя из вышесказанного, воздействие Сариняна на общее течение литературы более ощутимо по сравнению с двумя другими учеными.

ՀԳՍՏԻԲ

ՀՀԱ համահայկական հասարակական գիտությունների ակադեմիա, 2014  
Գիտությունների ակադեմիայի հանձնարարական քառամսյակի 3 (47) համարի հոդվածներ

ՀՀԱ համահայկական հասարակական գիտությունների ակադեմիա